

Luys Lnyu®



ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ  
ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ  
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

# ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՓԵՏՐՎԱՐ ԱՄԻՍՆԵՐԻՆ




## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ .....	1
1.1. Արդյունաբերություն .....	2
1.2. Շինարարություն .....	3
1.3. Ծառայություններ .....	4
1.4. Առևտուր .....	5
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ .....	5
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ .....	7
4. ՓՈԽԱՐԺԵՔ .....	8
5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ .....	8
5.1. Պետական բյուջեի եկամուտները .....	8
5.2. Բյուջեի ծախսերը .....	10
5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը .....	11
5.4. Պետական պարտք .....	11
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ .....	12
6.1. Գնաճ .....	12
6.2. Ավանդներ .....	13
6.3. Վարկեր .....	14
6.4. Դրամական փոխանցումներ .....	16
7. ԱՄՓՈՓՈՒՄ .....	17

## 1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ


Ընթացիկ տարին սկսվել է համեմատաբար բարձր տնտեսական ակտիվության ցուցանիշով, որի տեմպը թեև փոքր-ինչ դանդաղել է փետրվարին: Այսպես՝ փետրվար ամսին ՀՀ տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ-ը) կազմել է 7.2%՝ 0.4 տոկոսային կետով դանդաղելով հունվարի նկատմամբ, իսկ հունվար-փետրվար ամիսների ՏԱՑ-ը կազմել է 7.4%:

**Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային, %**



2026թ. հունվար-փետրվար ամիսներին ՏԱՑ-ի աճին ամենամեծ նպաստում է ունեցել արդյունաբերության ոլորտը՝ 3.4 տոկոսային կետով: Զգալի նպաստում են ունեցել նաև ծառայությունների, առևտրի և շինարարության ոլորտները՝ համապատասխանաբար 1.7, 1.3 և 1.0 տոկոսային կետով:

**Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները 2026թ. հունվար-փետրվար ամիսներին, տոկոսային կետ<sup>1</sup>**



**1.1. Արդյունաբերություն**

**Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, %**



**Արդյունաբերության ոլորտի աճը բավական բարձր է եղել տարեկազմին և ունի արագացման միտում: 2026թ. հունվարին արդյունաբերության աճը կազմել է 10.6%, իսկ փետրվարին արագացել է՝ հասնելով 23.8%-ի՝ էական նպաստում ունենալով SUՑ-ի բարձր ցուցանիշին: Արդյունքում հունվար-փետրվար ամիսների կուտակային աճի ցուցանիշը կազմել է 17.2%:**

<sup>1</sup> Նպաստումների հաշվարկն իրականացվել է SUՑ-ի 2025թ. տարեկան կշիռների հիման վրա: Տարեկան և ամսական կշիռների տարբերությունների պատճառով առաջացող մնացորդը բաշխվել է ոլորտների միջև՝ նորմավորելով ըստ նպաստումների չափերի:


Հունվար ամսվա տվյալներով<sup>2</sup> արդյունաբերության ոլորտի բոլոր ենթաօլորտները դրական են նպաստել աճին: Ամենամեծ նպաստումն ունեցել է հանքարդյունաբերության ոլորտը, որտեղ գրանցվել է 25.2% աճ, այնուհետև «էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» ենթաօլորտն է՝ 17.0% աճով, որոնց նպաստումն ընդհանուր արդյունաբերության աճին կազմել է համապատասխանաբար 4.5 և 3.4 տոկոսային կետ: Մշակող արդյունաբերության ոլորտում գրանցվել է ավելի ցածր՝ 4.3% աճ, ինչն ընդհանուր արդյունաբերության աճն արագացրել է 2.6 տոկոսային կետով:

Մշակող արդյունաբերության ոլորտում աճին ամենամեծ նպաստումն է ունեցել «քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրություն» ենթաօլորտի աճը՝ շուրջ 3.2 անգամ, որի նպաստումը մշակող արդյունաբերությանը կազմել է 3.1 տոկոսային կետ: Էական աճ է գրանցվել նաև «էլեկտրական սարքավորանքի արտադրություն» և «կահույքի արտադրություն» ենթաօլորտներում՝ համապատասխանաբար 56.4% և 75.9%, որոնց նպաստումները կազմել են 1.1 և 0.6 տոկոսային կետ:

Նույն ժամանակահատվածում, մշակող արդյունաբերության աճին բացասական նպաստում ունեցող ենթաօլորտներից են եղել «այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությունը» և «ծխախոտային արտադրատեսակների արտադրությունը»՝ աճին հակազդելով համապատասխանաբար 1.6 և 0.6 տոկոսային կետով:

## 1.2. Շինարարություն

Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, %




<sup>2</sup> Արդյունաբերության փետրվար ամսվա տվյալները՝ ըստ ենթաօլորտների, դեռևս չեն հրապարակվել:

**Շինարարության ոլորտում աճի տեմպի արագացումը շարունակվել է:** Նախորդ տարվա շինարարության էական մեծ ծավալներից և բարձր աճի տեմպերից հետո, ընթացիկ տարվա առաջին երկու ամիսներին շինարարությունը շարունակում է աճ գրանցել, որի տեմպը փետրվարին հասել է 21.8%-ի՝ հունվարի համեմատ արագանալով 3.1 տոկոսային կետով: Կուտակային՝ հունվար-փետրվար ամիսների աճի ցուցանիշը կազմել է 20.5%: Շինարարության աճի բարձր տեմպը անսպասելի է, քանի որ ենթադրվում էր, որ հիպոթեքային վարկերի տոկոսավճարների գծով եկամտային հարկի վերադարձի ծրագրի Երևանի մասով ավարտից հետո շինարարության տեմպերը կդանդաղեն:

### 1.3. Ծառայություններ

**Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %**



**Ծառայությունների ոլորտի աճի տեմպը նույնպես բարձր է, սակայն էականորեն զիջում է նախորդ տարվա նույն ամիսների աճերին:** 2026թ. փետրվարին ծառայությունների ոլորտում գրանցվել է 7.0% աճ, իսկ հունվար-փետրվար ամիսների աճը կազմել է 7.2%՝ նախորդ տարվա համապատասխան ամիսների աճից ցածր լինելով 4.7 տոկոսային կետով:


Ծառայությունների ոլորտի աճը, հունվար ամսվա տվյալներով<sup>3</sup>, պայմանավորված է եղել գրեթե բոլոր ենթաօլորտներում գրանցված աճերով, որոնցից ամենանշանակալին են եղել «տեղեկատվություն և կապ», «տրանսպորտ» և «մշակույթ. զվարճություններ և հանգիստ» ենթաօլորտների աճերը, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 1.7, 1.3 և 1.0 տոկոսային կետ:

<sup>3</sup> Ծառայությունների ոլորտի՝ ըստ ենթաօլորտների փետրվար ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

Ծառայությունների ոլորտին 0.1 տոկոսային կետով բացասական է նպաստել կրթական ծառայությունների 3.0% անկումը:

### 1.4. Առևտուր


**Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %**



**Առևտրի աճի տեմպը հունվարին բավական ցածր էր, սակայն փետրվարին արագացել է:** 2026թ. հունվարին առևտրի ոլորտում գրանցվել է ընդամենը 0.7% աճ, որը փետրվարին արագացել է՝ հասնելով 5.6%-ի: Կուտակային աճը՝ հունվար-փետրվար ամիսներին կազմել է 3.3%:

## 2. ԱՐՏԱԲԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ<sup>4</sup>

**Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճը, %**




<sup>4</sup> Արտահանման և ներմուծման 2026թ. նախորդ ամսվա ցուցանիշները վերանայվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից:

**Արտահանման աճի տեմպը վերականգնվել է փետրվարին:** 2026թ. սկսել է արտահանման բացասական ցուցանիշով, սակայն փետրվարին արձանագրվել է արտահանման բարձր աճ՝ 37.6%: Արդյունքում հունվար-փետրվար ամիսների արտահանման աճը կազմել է 12.6%:

Հունվար ամսվա տվյալներով<sup>5</sup> արտահանումը անկում էր գրանցել, ինչը հիմնականում պայմանավորված է եղել «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի արտահանման 45.1% անկմամբ՝ ընդհանուր արտահանմանը ունենալով 14.8 տոկոսային կետով բացասական նպաստում: Վերջինս հիմնականում կապված էր ոսկու վերաարտահանման ծավալների հետ: Արտահանմանն էական դրական նպաստում է ունեցել հանքահումքային արտադրանքի արտահանման 43.0% աճը, որի դրական նպաստումը կազմել է 6.1%:

**Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճը, %**



**Ներմուծման ծավալների դինամիկան նման է եղել արտահանմանը:** Ներմուծման ցուցանիշը 2026թ. հունվարին էական չափով բացասական է եղել, սակայն փետրվարին գրանցվել է կտրուկ աճ: Այսպես՝ փետրվարին ներմուծման աճը կազմել է 26.9%, իսկ կուտակային՝ հունվար-փետրվար ամիսների աճը՝ 7.3%:

Հունվար ամսվա տվյալներով<sup>6</sup>, ներմուծման անկումը նույնպես պայմանավորված է եղել «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբով, որի ներմուծման ծավալը նվազել է 63.3%-ով, իսկ նպաստման չափը եղել է՝ -10.0 տոկոսային կետ: Ներմուծման աճին դրական նպաստում են ունեցել «քիմիայի և դրա հետ կապված

<sup>5</sup> Արտահանման փետրվար ամսվա՝ ըստ ապրանքատեսակների տվյալները դեռևս չեն հրապարակվել:


<sup>6</sup> Ներմուծման փետրվար ամսվա՝ ըստ ապրանքատեսակների տվյալները դեռևս չեն հրապարակվել:

արդյունաբերության ճյուղերի արտադրանքի» ներմուծման 65.9% աճը և «պատրաստի սննդի արտադրանքի» 45.5% աճը, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 2.7 և 2.6 տոկոսային կետ:

### 3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ<sup>7</sup>

**Անվանական աշխատավարձի աճը տարեսկզբին մնացել է նախորդ տարվա համեմատ համադրելի մակարդակում:** Միջին ամսական անվանական աշխատավարձն ընդհանուր տնտեսությունում 2026 թվականի հունվարին՝ նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 5.4%-ով՝ կազմելով 293.3 հազ. դրամ: Ոչ պետական հատվածում միջին ամսական անվանական աշխատավարձի աճը եղել է 5.5%՝ կազմելով 318.7 հազ. դրամ, իսկ պետական հատվածում՝ 4.2%-ով՝ կազմելով 228.1 հազ. դրամ:


**Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը 2025-2026թթ. հունվարին, %**



<sup>7</sup> Աշխատավարձի ցուցանիշը հաշվարկվում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացվող (հաշվետու ամսվան հաջորդող 25/26-րդ օրը) եկամտային հարկի և սոցիալական վճարի հաշվառման տվյալների բազայի հիման վրա և հրապարակվում է ՀՀ ՎԿ կողմից՝ յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը: Հետևաբար, 2026թ. փետրվար ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

## 4. ՓՈՒՆԱՐԺԵՔ

**Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները, 12-ամսյա աճը (% աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում) և միջին ամսական անվանական փոխարժեքը (դրամ)**



**2026թ. փետրվարին ՀՀ դրամը, նախորդ տարվա համեմատ, արժևորված է եղել ԱՄՆ դոլարի նկատմամբ և արժեզրկված՝ եվրոյի և ՌԴ ռուբլու նկատմամբ:** 2026թ. փետրվարին ՀՀ դրամի միջին փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ կազմել է 377.6 դրամ՝ նախորդ տարվա փետրվարի համեմատ նվազելով 18 դրամով: Եվրոյի նկատմամբ և ՌԴ ռուբլու նկատմամբ ՀՀ դրամը նույն ժամանակահատվածում արժեզրկվել է. ՀՀ դրամի փոխարժեքն աճել է համապատասխանաբար 34.6 և 0.6 դրամով: Հունվար-փետրվար ամիսներին ՀՀ դրամի արժևորումը ԱՄՆ դոլարի նկատմամբ կազմել է 4.7%, իսկ եվրոյի և ՌԴ ռուբլու նկատմամբ դրամն արժեզրկվել է համապատասխանաբար 7.6% և 16%-ով:


## 5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ

### 5.1. Պետական բյուջեի եկամուտները

Պետական բյուջեի եկամուտներն աճել են բարձր տեմպով: 2026թ. փետրվարին պետական բյուջեի ընդհանուր եկամուտների աճը կազմել է 12.4%

հունվարի համեմատ արագանալով 4.9 տոկոսային կետով: Հունվար-փետրվար ամիսներին բյուջեի ընդհանուր եկամուտներն աճել են 9.4%-ով: Նույն ժամանակահատվածում փոքր աճ են ունեցել նաև պետական բյուջեի ոչ հարկային եկամուտները՝ 0.4%-ով, իսկ պաշտոնական դրամաշնորհները նվազել են 23.4%-ով (0.2 մլրդ դրամով): Հարկային եկամուտների աճը փետրվարին կազմել է 13.0%՝ հունվարի համեմատ արագանալով 5.2 տոկոսային կետով: 2026թ. հունվար-փետրվար ամիսների կուտակային աճը կազմել է 9.8%:

**Գծապատկեր 11. Հարկային եկամուտների կուտակային աճը, %**



Հարկային եկամուտների աճին ամենամեծ նպաստումն ունեցած հարկատեսակներն են՝ եկամտային հարկը (աճը՝ 15.3%), ԱԱՀ-ն (աճը՝ 5.1%) և պետական տուրքերը (աճը՝ 63.8%), որոնց նպաստումներն ընդհանուր հարկային եկամուտների աճին կազմել են համապատասխանաբար 4.7, 1.9 և 1.7 տոկոսային կետ:


**Աղյուսակ 1. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների**

	2025թ. Հունվար-փետրվար		2026թ. Հունվար-փետրվար	
	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ
<b>Ընդամենը հարկային եկամուտներ և պետական տուրք</b>	<b>22.5</b>	<b>22.5</b>	<b>9.8</b>	<b>9.8</b>
Ավելացված արժեքի հարկ	31.9	11.3	5.1	1.9
Ակցիզային հարկ	-11.6	-0.9	14.8	0.8
Շահութահարկ	63.5	2.6	-38.8	-2.1
Պետական տուրք	19.0	0.5	63.8	1.7
Մաքսատուրք	1.3	0.1	-11.7	-0.4

Բնապահպանական և բնօգտագործման վճարներ	82.2	0.9	-11.2	-0.2
Այլ հարկեր	-9.6	-0.4	54.5	1.6
Շրջանառության հարկ	20.0	0.9	24.6	1.1
Եկամտային հարկ	22.2	6.8	15.3	4.7
Սոցիալական վճարումներ	12.5	0.7	11.2	0.6

## 5.2. Բյուջեի ծախսերը


**Գծապատկեր 12. Պետական բյուջեի ծախսերը և դրա բաղադրիչները, մլրդ դրամ**



**Պետական բյուջեի ծախսերի աճի տեմպը նույնպես բարձր է եղել:** Պետական բյուջեի ընդհանուր ծախսերը 2026թ. հունվար-փետրվարին աճել են 9.4%-ով՝ կազմելով 351.9 մլրդ դրամ: Ծախսերի աճը պայմանավորված է եղել ընթացիկ ծախսերի 19.5% աճով, որը ընդհանուր աճին նպաստել է 17.0 տոկոսային կետով, իսկ կապիտալ ծախսերը նվազել են 58.8%-ով՝ ծախսերի աճին հակազդելով 7.7 տոկոսային կետով:

### 5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը

Գծապատկեր 13. Պետական բյուջեի հավելուրդը (պակասուրդը (-), մլրդ դրամ




**Պետական բյուջեն եղել է հավելուրդային:** 2026թ. հունվար-փետրվար ամիսներին եկամուտների և ծախսերի վերոհիշյալ դինամիկայի պայմաններում ձևավորվել է պետական բյուջեի հավելուրդ՝ շուրջ 78.3 մլրդ դրամի չափով, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից ավելի է 6.7 մլրդ դրամով կամ 9.3%-ով:

### 5.4. Պետական պարտք

**ՀՀ պետական պարտքը շարունակում է աճել:** 2026թ. փետրվարի վերջի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 14.1 մլրդ ԱՄՆ դոլար՝ հունվարի համեմատ աճելով 16.8 մլն ԱՄՆ դոլարով<sup>8</sup>: Կառավարության պարտքը փետրվարի վերջի դրությամբ նույնպես աճել է՝ կազմելով 14.1 մլրդ ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա փետրվարի համեմատ աճելով 13.1%-ով: Նույն ժամանակահատվածում ներքին պարտքի աճը կազմել է 4.9%, իսկ արտաքին պարտքինը՝ 17.3%: Ներքին պարտքի կշիռը կառավարության ընդհանուր պարտքի կառուցվածքում փետրվարի վերջի դրությամբ կազմել է 52.2%:

<sup>8</sup> Պետական պարտքի մասով նախորդ տարվա փետրվարի հետ համեմատությունը չի ներկայացվում, քանի որ մեթոդաբանության փոփոխության հետևանքով համադրելի ցուցանիշ հրապարակված չէ: Մեթոդաբանության փոփոխության մասով առավել մանրամասն նշվել է նախորդ ամսվա տեղեկանքում: Կառավարության պարտքի գծով նոր մեթոդաբանությամբ ցուցանիշները ևս չեն հրապարակվում: Այնուամենայնիվ, նախկին հրապարակումների հիման վրա հնարավոր է հաշվարկել համադրելի ցուցանիշ (կառավարության պարտքից հանելով երաշխիքները), ինչը հնարավորություն է տալիս ներկայացնել համեմատություն նախորդ տարվա համապատասխան ամիսների հետ:

**Գծապատկեր 14. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %**




**Պետական գանձապետական պարտատոմսերի տոկոսադրույքները շարունակել են նվազել:** Պետական կարճաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը (տոկոսադրույքը) 2026թ. փետրվարին կազմել է 6.9%՝ նախորդ ամսվա համեմատ նվազելով 0.3 տոկոսային կետով, իսկ նախորդ տարվա փետրվարի համեմատ՝ 1.5 տոկոսային կետով: Միջնաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը փետրվարին կազմել է 7.4%՝ նախորդ տարվա փետրվարի համեմատ նվազելով 2.4 տոկոսային կետով:

**6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ**

**6.1. Գնաճ**

**Գծապատկեր 15. 12-ամսյա գնաճ, %**




**Գնաճի տեմպը սկսել է արագանալ:** Գնաճի տեմպը 2026թ. փետրվարին կազմել է 4.3%՝ հունվարի համեմատ արագանալով 0.5 տոկոսային կետով: Այդ

պայմաններում, սակայն, կենտրոնական բանկը մարտ ամսվա ընթացքում չի վերանայել վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ պահպանելով այն 6.5%-ի մակարդակում:


## 6.2. Ավանդներ

Գծապատկեր 16. Ավանդների 12-ամսյա աճը, %



**Ավանդների աճի տեմպը փետրվարին դանդաղել է, սակայն շարունակել է մնալ բարձր:** 2026թ. փետրվարին ավանդների աճը նախորդ տարվա փետրվարի համեմատ կազմել է 15.8%՝ 1.4 տոկոսային կետով դանդաղելով հունվարի համեմատ, սակայն շարունակելով գերազանցել նախորդ տարվա աճերը: Աճը պայմանավորված է եղել ինչպես ռեզիդենտներից, այնպես էլ ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդների աճերով՝ համապատասխանաբար 19.6% և 3.5%:

Գծապատկեր 17. Տնտեսության հատվածների նպաստումներն ավանդների աճին, տոկոսային կետ




2026թ. փետրվարին ավանդների աճն առավելապես պայմանավորված է եղել տնային տնտեսություններից ներգրավված ավանդների աճով, որի նպաստումը կազմել է 7.8 տոկոսային կետ: Տնտեսության մյուս հատվածներից ներգրավված ավանդների ծավալները նույնպես դրական են նպաստել ընդհանուր ավանդների աճին: Նախորդ տարվա համեմատ կտրուկ արագացել է այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդների նպաստումը՝ հասնելով 3.6 տոկոսային կետի:


### 6.3. Վարկեր

**Վարկերի աճի տեմպը շարունակում է մնալ բարձր:** ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի ընդհանուր ծավալը 2026թ. փետրվարին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 23.0%-ով՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 1.3 տոկոսային կետով: Աճել են և՛ ռեզիդենտներին, և՛ ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալները՝ համապատասխանաբար 21.7% և 57.4%-ով:

**Գծապատկեր 18. Վարկերի 12-ամսյա աճերն ըստ վարկառուների ռեզիդենտության, %**




**Գծապատկեր 19. Ռեզիդենտներին տրված վարկերի 12-ամսյա աճը, %**



Ռեզիդենտներին տրամադրված վարկերի կազմում իրավաբանական անձանց վարկերն աճել են 23.6%-ով (նախորդ ամսվա չափով), իսկ տնային տնտեսություններին տրամադրված վարկերը՝ 19.9%-ով: Վերջիններիս նպաստումները կազմել են համապատասխանաբար՝ 11.7 և 10.1 տոկոսային կետ:

**Գծապատկեր 20. Տնտեսության ճյուղերի նպաստումները ռեզիդենտներին տրամադրված վարկերի աճին, տոկոսային կետ<sup>9</sup>**




2026թ. փետրվարին բոլոր ոլորտներին տրամադրված վարկերը շարունակել են աճել՝ էականորեն նպաստելով վարկային պորտֆելի ընդհանուր ընդլայնմանը:

<sup>9</sup> Վարկերի վերաբերյալ վիճակագրական տվյալները ներկայացվում են ինչպես ոլորտային դասակարգմամբ, այնպես էլ ըստ ռեզիդենտության և տնտեսության հատվածների դասակարգման: Տարբեր դասակարգումներով ներկայացվող տվյալները տարբերվում են միմյանցից, ինչը բացատրվում է ՀՀ ԿԲ կողմից տեղեկատվության հավաքագրման տարբերություններով և չի մանրամասնվում:

Առավել բարձր աճ է արձանագրվել սպառողական վարկերի գծով (27.9%), որի նպաստումը ընդհանուր աճին կազմել է 6.3 տոկոսային կետ: Վարկերի աճին զգալի նպաստում են ունեցել նաև ծառայությունների (աճը՝ 27.5%) և շինարարության (աճը՝ 30.2%) ոլորտներին ուղղվող վարկերի, ինչպես նաև հիպոթեքային վարկերի (աճը՝ 13.1%) աճերը, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 4.3, 3.1 և 3.0 տոկոսային կետ:

#### 6.4. Դրամական փոխանցումներ

**Գծապատկեր 21. ՀՀ բանկերի միջոցով իրականացվող դրամական փոխանցումների զուտ ներհոսքը, մլն ԱՄՆ դոլար<sup>10</sup>**



Արտերկրից դեպի ՀՀ փոխանցվող դրամական միջոցների զուտ ներհոսքը հունվարին, նախորդ տարվա հունվարի համեմատ, էականորեն աճել է: Դրամական միջոցների զուտ ներհոսքը 2026թ. հունվարին կազմել է 169.1 մլն ԱՄՆ դոլար, այն դեպքում, երբ նախորդ տարի հունվարին այդ ցուցանիշը կազմել էր 18.7 մլն ԱՄՆ դոլար (աճը կազմում է շուրջ 9 անգամ): Զգալի աճը պայմանավորված է ինչպես դրամական ներհոսքի աճով (շուրջ 32.3%), այնպես էլ արտահոսքի կրճատմամբ (-7.9%):

<sup>10</sup> Ներկայացված է ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր կատարված ընդամենը ամսական փոխանցումները և դրանց տարբերությունը՝ ԱՄՆ դոլարով: 2026թ. փետրվար ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

## 7. ԱՄՓՈՓՈՒՄ

**1. 2026թ. բարձր տնտեսական աճի տեմպը պահպանվում է՝ հիմնականում պայմանավորված հանքարդյունաբերության աճով:** Ընթացիկ տարին սկսվել է համեմատաբար բարձր տնտեսական ակտիվության ցուցանիշով, որի տեմպը փոքր-ինչ դանդաղել է փետրվարին: Փետրվար ամսին ՀՀ տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ-ը) կազմել է 7.2%՝ 0.4 տոկոսային կետով դանդաղելով հունվարի նկատմամբ: Հունվար-փետրվար ամիսների ՏԱՑ-ը կազմել է 7.4%, որին ամենամեծ դրական նպաստում է ունեցել արդյունաբերության ոլորտը, որն էլ իր հերթին պայմանավորված է եղել հիմնականում հանքարդյունաբերության աճով: ՏԱՑ-ին դրական նպաստում են ունեցել նաև ծառայությունների, առևտրի և շինարարության ոլորտները:

**2. Արտահանման և ներմուծման ցուցանիշները վերականգնվել են:** Հունվարին արձանագրված անկումից հետո, փետրվարին թե՛ արտահանման, թե՛ ներմուծման ծավալները կտրուկ վերականգնվել են՝ աճելով համապատասխանաբար 37.6% և 26.9%-ով: Թեև փետրվարի արտաքին առևտրի կառուցվածքային տվյալները դեռևս չեն հրապարակվել, հունվարի ցուցանիշների վերլուծությունը թույլ է տալիս ենթադրել, որ արտահանման աճը հիմնականում պայմանավորված է հանքարդյունաբերական արտադրանքի արտահանման ակտիվացմամբ:

**3. Պետական բյուջեի եկամուտները և ծախսերը աճում են, սակայն կապիտալ ծախսերը՝ նվազում:** 2026թ. հունվար-փետրվար ամիսներին պետական բյուջեի ինչպես եկամուտները, այնպես էլ ծախսերը աճել են: Միաժամանակ, կապիտալ ծախսերը զգալիորեն նվազել են՝ 58.8%-ով: Կապիտալ ծախսերի նման կտրուկ անկումը մտահոգիչ է՝ հաշվի առնելով դրանց կարևորությունը երկարաժամկետ տնտեսական աճի և ենթակառուցվածքային զարգացման համար:

**4. Գնաճի տեմպը սկսել է արագանալ:** Գնաճի տեմպը 2026թ. փետրվարին կազմել է 4.3%՝ հունվարի համեմատ արագանալով 0.5 տոկոսային կետով: Այդ պայմաններում, սակայն, կենտրոնական բանկը մարտ ամսվա ընթացքում չի վերանայել վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ պահպանելով այն 6.5%-ի մակարդակում:

---

**«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:**

**Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան *ակտիվ հղման* տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:**